Նոր տեսակ շարժուն Արուեստահանդէս մը. — Գերմանական Արուեստահանդիսից ընկերութիւնն 5 միլիոն մարք դրամագլխով, կ'ուզէ նոր տեսակ շարժական մեծ Արուեստահանդէս մը պատրաստել, և մասնաւոր ասոր համար ընդարձակ շոգենաւ մը շինել տալ։ Հրատարակած շրջաբերականին մէջ կ'ըսեն՝ թէ Արուեստահանդէսն երկու տարի պիտի տեւէ, և պիտի անցնի Պալդիկ ծովէն, Հիւսիսային և Հարաւային Ամերիկայ եզերներէն, Զինաստանէն, Ճաբոնէն, Աւստրալիայէն, և Միջերկրականի բոլոր մեծ նաւահանգիստներէն։ Մեկնած միջոցն Համպուրկէն ճամբայ պիտի ելնէ։

ՋՐԱԿՐԻԱՑ ԹԷՄՄԻՆԲԻ

ՃԱԿԱՑ և առուակաց մէջ բնակող կրիայից մէջ, առանց ամենեին վրիպանաց մէջ ինալու երկիւղի, կըրնանք հաստատել թէ ամենէն անուանին և միանգամայն հետաքրքրական է Թէմմինքի Ջրակրիայն (Chélydre), և կամ Մողիսակրիայն (Emysaure). զոր Տիւմէրիլ և Բիբրոն, սողնոց դասակարգութեան պարագլուխքն, առանձին դասու բաժնեցին Ճախաձախաբնակ (Glodites) անուամբ, թէ և անոնց սովորութիւնքն, արտաքին տեսքն և կազմութիւնն քիչ տարբերութիւն ունին երկրաբնակ կրեայից կազմութենէն և սովորութենէն։

Այս կենդանիս, զոր Բարիզու կենդանաբանական թանգարանն մեծ ուշադրութեամբ և խնամքով երկու հատ կը պահէ, նշանաւոր է և կը տարբերի առաջին հայեացքով ուրիշ կրիաներէն՝ իւր գլխոյն ահաւոր մեծութեամբն, և երեսին վրայ քնոց ոսկերաց մօտ ունեցած արտաքոյ կարգի լայնութեամբն, և որ ընդ հուպ կը նեղնայ ծայրասուր շրթամբք, որոյ վրայ կը գտնուին ուղղահայեացաբար արտաքս ցցուեալ՝ ունգանց երկու խոռոչքն։ Իւր մեծաբիբ աչքերն փալփլուն են, և շրջապատեալ ոսկրային և դուրս ցցուեալ փոքրիկ շրջանակէ մը, որ կ'անդրադառնայ աչաց ծիածանին վրայ։ Բերանն, լայնարձակ հատուած մ'ունի, և ծնօտին եզերքը վերջացած է եղջերային, սղոցանման և հատու դանակով մի. որով ստորին ծամելեաց վերնոյն մէջ մտնելովն, կը ձևացընէ կրկնասայր ահաւոր զէնք մի, կարող միանգամայն ի յօշոտել իւր որսերը. և որ մեծն է նաև ի պաշտպանութիւն իւր անձին, որով ահաբեկ և ձեռնունայն յետս կ'ընկըրկէ իւր ոսոխն։ Վերին ծամելեաց ծայրը դէպ յառաջ և ի

խոնարհ կ'երկննայ ոսկոր մի մահկանաձև և ճանկանման, որ ամենա-ճիշտ կը նմանի անգեղ կոցին։ Նման վերին ծամելեաց, կը գտնուին նաև ստորին ծամելեաց ծայրը սրածայր կտուց մը, որ երբ իւր բերանն կը փակէ, կ'երթայ կը մտնէ վերին ծամելեաց մէջ գտնուած յատուկ խոռոչի մի մէջ։ Իսկ կզակին ներքևն ալ զոյգ մը մազմզուկներ ունի։

Գլուխն միացեալ է մարմնոյն հետ թանձր վզով մը որ պատած է անհարթ, խորշոմալև ծալ ի ծալ մորթով, որոյ վրայ կը գտնուին խաւ խաւ արտաքս ցցուեալ մորթոյ բրտութիւններ. որք շատ անգամ կը վերջանան ոսկրեայ փչերով։ Այս մորթս ամենեին կապակցութիւն չունի բուն վզին հետ, և այնպէս թոյլ է, որ կարծես պատեան մ'է՝ յոր-ում ազատաբար կրնայ շարժիլ վիզը և քաշուիլ ի ներքս իւր պա-տենին մէջ։ Եթէ զինքը այս դրից մէջ նկատենք, ինչպէս որ կը կե-նայ սովորաբար, պիտի կարծենք թէ ամենեին վիզ չունի և ա-նընդմիջաբար գլուխն միացեալ պիտի լինի ընդ մարմնոյն. և երբեմն կը հանդիպի որ գրեթէ բոլոր իւր այն մեծդի գլուխն իսկ իրեն պա-տենին մէջ կ'ամփոփէ։ Բայց երբ իւր թափանցիկ և սուր աչքերն կը նշմարեն իրեն սեռնակին դրան առջև որս մի և կամ թշնամի մի, վիզը գահավիժաբար կ'երկննայ արտաքս ի պատենէն, առանձին յատուկ ջլաց զօրութեամբը և գլուխն յառաջ կը նետուի բերանա-բաց՝ թշնամւոյն վրայ, և զոր առանց թողլոյ որ խուսաբէ կը փակէ իւր ահաւոր ծամելեաց մէջ։

Պատեանն լայն է, ըստ բաւականի երկայն, և քիչ մը կորաձև, և վրան 3 հորիզոնական գրիւք շարուած գծեր կ'երկննան, իսկ եզերքը դէպ յարտաքս կը գալարի. բաց ի ետևի մասէն որ առանց ամենեին դարձուածոյ՝ ատամնաձև կը վերջանայ։ Վերին պատենին հակա-դիր կողմն գտնուած կլծոց լանջապահն (plastron), նեղ, խաչաձև և անշարժ է։

Անդամներն շատ ուժեղ են, և մատունքն միացեալ իրարու հետ ճկուն մաշկով մը, որով ամենեին չզանազանուիր ի մաշկոտն թռչ-նոց. իւրաքանչիւր մատանց ծայրը զինեալ է զօրաւոր եղնգամբք՝ յափշտակիչ թռչնոց մագիլներու նման. իսկ իւր երկայն և թանձր մատանց թիւը առաջակողմեան ոտից վրայ հինգ են և յետակող-մեանց վրայ չորս։ Ցուտը վզին նման ծածկուած է բրտացեալ և փչա-լից մորթով մը, որոյ վրայ ընդ բովանդակ երկայնութիւն պոչին կը գտնուին երեք շարք հաւկիթաձև արտաքս ելած ուռեցքներ, որոց երկուքը կողմնակի են և երրորդն անմիջապէս վերի մասին վրայ, ողնայարական ոսկեր նման. սակայն այս ուռեցքներն աւելի մեծ են և բարձր պոչին միջակին վրայ քան երկու ծայրերը։

Գլխոյն ստորին մասն, վիզը և պատեանն աւելի կամ նուազ թխա-գոյն են, իսկ լանջապահն և ծամելեաց չորս կողմն՝ մեծաւ մասամբ ոսկեգոյն դեղնորակ։

digitised by A.R.A.R.@

Հասարակաբար կը կարծուի որ Թէմմինքի Ջրակրիայն յոյժ երկարակեաց լինի, որովհետև այն երկու կենդանիներն որ կը պահուին Բարիզու կենդանաբանական պարտիզին մէջ և որոց մին 11 տարի է յորմէհետէ բռնուած է և միւսն 9 տարի, գրեթէ այսչափ ամաց շրջանին մէջ իրենց մարմնոյն հասակին վրայ զգալի փոփոխութիւն մը չտեսնուեցաւ. ասոնց միոյն պատենին երկայնութիւնն է 66 հարիւրորդամետր, և մեծագոյն լայնութիւնն 51 հարիւրորդամետր. և բոլոր մարմնոյն երկայնութիւնն պոչովն հանդերձ, համարելով վիզն ոչ շատ ներս քաշած և ոչ բոլորովին արտաքս երկնցած, է 1 մետր և 27 հարիւրորդամետր։

Ջրակրեայք առաւելապէս Հիւսիսային Ամերիկոյ մէջ կը գտնուին, և մանաւորապէս Միացեալ Նահանգաց Միսիսիպի գետին, և այն ամեն գետոց մէջ որք կը թափին Մեխիքոյ ծոցը, ուսկից բերուած են նաև Բարիզու կենդանաբանական պարտիզին մէջ եղածներն։

Սովորաբար անշարժօրէն կը կենան ջրոյն յատակը, իրենց ցռուկը խոտորնակի դէպ ի վեր ուղղած. երբեմն երբեմն կը բարձրացնեն իրենց գլուխը դէպ ի վեր, և ցռուկը ջրէն դուրս կը հանեն օդոյ նոր պաշար մ՚առնելու համար, և յետոյ փութով դարձեալ կ՚աներևութանան։ Շատ անգամ կը տեսնուի հեղանիւթոյ մակերևութին վրայ ջրոյ վարէն դէպ իվեր մղեալ ընթացքի նշաններ, զոր հաւանականաբար կ՚արձըկէ իրեն ռնգունքներէն, սակայն յայտնի չէ թէ այս ջուրը ուստի՞ կ՚ելլէ, ստամոքսէ՞ն եթէ թոքերէն, և թէ ինչ պատճառաւ։ Կը յուսանք որ ապագայն այս հարցմանց ալ լուծումն կը շնորհէ քիչ ժամանակէն։

Ջրակրեայից ցեղը բոլորովին մսակերք են. իրենց ազատութեան մէջ ընդհանրապէս կը կերակրին ձկամբք, սակայն կ՚ախորժին նաև ջրային թռչնոց միսն ալ, զորս բռնելով իրենց ծամելեօք կը քաշեն ի յատակ ջուրց, ուր զայնս սատկեցընելէն յետոյ հանգըստեամբ կը լափեն։

Իսկ իրենց գերութեան վիճակին մէջ կը շատանան արիւնազանգ մսով և ձկամբք ալ, մկներով և դեռ այն ինչ սպանեալ կատուներով։ Իրենց ննդեան եղանակն՝ մեծ ազդեցութիւն ունի բնութեան վրայ ուստի և գազանային են և յախուռն, և ինչպէս որ կը հաւաստեն արժանաւոր ականատեսք՝ ահաւոր իրենց կրից մէջ եղած ժամանակ. որ և յայտնապէս կը տեսնուի նոյն իսկ իրենց այն կեղծաւոր դրից մէջ ջրոյ յատակը անշարժ կեցած ամենևին, ցռուկը դէպ ի վեր տնկած և աչքը միակերպ որսին վրայ կեդրոնացուցած. և այս գազանային և կեղծաւոր բնութեանը յայտնի ապացոյց մ՚է, գլխոյն գործարանին կազմութիւնն, զոր ըստ կամս ի ներքս կը քաշէ, և երբեմն նետի արագութեամբ դէպ յառաջ կ՚արձըկէ։ Դարձեալ ուրիշ պատճառ մ՚ալ որով ջրակրեայք ահաւոր և երկիւղալի կը լինին այլոց

digitised by A.R.A.R.@

անուանոց՝ է այս․ որովհետեւ ինչպէս ըսինք նախընթացաբար որ այս կրեայք երկայն ժամանակ անշարժ կը կենան ջրոց յատակը, այս անշարժութեան հետեւանք կ'ուգան շատ մը մակաբոյծ (parasites) բուսակենդանք արմատ ձգելու իրեն պատեանին վրայ որով գրեթէ աննշմարելի կը լինի, արդէն ջրոց յատակը լի լինելով նմանօրինակ բոյսերով։

Թէմմինքի Ջրակրիայն իր այս բնիկ վայրենութեամբն հանդերձ միատեղ կրնայ ապրիլ իրեն ստորակարգեալ ուրիշ ցեղի մը հետ որ է Օձաջրակրիայ (Chélydre serpentine), որոյ թէ և հասակին մեծութիւնը չհաւասարիր Թէմմինքի Ջրակրիային, սակայն վայրագութիւնը և նենգժոտութիւնը շատ աւելի կը գերազանցէ քան զայն, ինչպէս որ յայտ է նոյն իսկ իր անուանակոչութենէն. այնպէս որ իր ազատ դրից մէջ ոչ զոք կը թողու որ իրեն մօտենայ, և կամ համարձակի իրեն բնակելի ջուրց մէջ մտնել որ և իցէ պատճառաւ, այլ յետս կը դարձընէ պատճառելով մեծամեծ վէրքեր և երբեմն նաև մահ իսկ։

Այս կրիայից ջրոց մէջ ունեցած արագաշարժութիւնն յոյժ զարմանալի է, մինչդեռ անոր հակառակ երբ կ'ելլեն հողոյ վրայ, հազիւ հազ կրնան քալել, որով ոչ երբեք ջրէն դուրս կ'ելլեն, բայց եթէ ստիպեալ ի բնութենէ իրենց հաւկիթները ծածկելու համար ընդ հողով, և որք յոյժ յարգի են իրենց համեղութեամբն, և ընդհանրապէս կը լինին 20–30 իւրաքանչիւր անգամ։ Սակայն ասոր հակառակ իրենց միսը անճաշակելի է ամենևին սաստիկ մշկահոտ լինելուն պատճառաւ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաղղիա. — Այս մի քանի ամսոց մէջ'ի Գաղղիա մեծամեծ քաղաքական կարևոր յեղափոխութիւնք տեղի ունեցան։ Շաբաթներով և ամիսներով ամէն տեղ հրատարակուած լրագրաց մէջ մեծագոյն մասն գրուեր է և կը գրուէ իսկ ցարդ զօրավարն Պուլանժէ։ Ոչ ոք ցարդ հաւաստեաւ գիտէ այս զօրավարին՝ Գաղղիոյ բազմաթիւ կուսակցութեանց որուն պատկանիլն. թէ և շատ հաւանական համարին, թէ գաղտնի յարաբերութեան մէջ է ընդ Թագաւորականս։ Շնորհիւ իր ժողովրդականութեան՝ Պուլանժէ Յունուար 27ին քուէարկութեան՝ մեծ առաւելութեամբ քուէից ընտրուեցաւ պատգամաւոր Բարիզու։ Բայց յիրաւի կը զարմանայ բովանդակ եւրոպեան մամուլն, որ զօրավարն ընտրութենէ վերջը քաշուեցաւ առանձնացաւ՝ որպէս թէ փափաքի թողուլ քաղաքական կեանքը։ Ֆլոքէ պաշտօնարանն իսկոյն յայտարարեց թէ վասն ապահովութեան երկրին

digitised by A.R.A.R.@